ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-16-1-15/1 (ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1) ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար վառելիքի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի 29.01.2016թ. N 1/13-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 09.02.2016թ. ժամը 14-00-ին, ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Հ.Շաբոյանը, Ա.Մարդոյանը, Ա.Մկրդումյանը, Մ.Սարդարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի բացման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-16-1-15/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լ.Հարությունյանը տեղեկացրեց, որ ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-16-1-15/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
«Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն (ք. Երևան, Պուշկինի 1 փող)

-ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-16-1-15/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին (ARMEPS) համակարգի միջոցով հայտ չեն ներկայացրել համակարգում 09.02.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

-«Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես (պիտանի) հայտ:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

-«Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ
		«Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ
1	Բենզին ռեգուլյար	53630000
2	Բենզին պրեմիում	1183333
3	Դիզելային վառելիք-1	5070000
4	Դիզելային վառելիք-2 /ձմեռային/	5475000
5	Դիզելային վառելիք-3 /ձմեռային/	2576000

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. «Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժիններով ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:
3. Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողների հաշվառման համարները:
4. Ոչ ավտոմատ եղանակով ծանուցել հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյան

Անդամներ՝ Հ.Շաբոյան

Ա.Մարդոյան

Ա.Մկրտումյան

Մ.Սարդարյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան